Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունն իբրև կառուցվածքային միավոր և բովանդակային ամբողջություն՝ շարունակողն է դեռևս 5-րդ դարում ամրագրված ու բյուրեղացած պատմագրական ժանրերին հատուկ իրողությունների ու օրինաչափությունների և անխուսափելիորեն պարագրկում է նաև այն բոլոր մեծ ու փոքր փոփոխությունները, որոնց ենթարկվել է ժանրն իր զարգացման երկար ճանապարհին: Ասվածն առաջին հերթին վերաբերում է գրական հատույթին, ի մասնավորի՝ ժանրային նկարագրին: Մանավանդ որ՝ գրական երկի կազմաբանությունը հատկանշվում է առաջին հերթին ժանրով կամ ժանրային նկարագրով: «Հայ պատմագրությունը ***միապարր և միասեռ չէ ժանրային առումով,*** այն ***ներառում է իր մեջ միջնադարյան արձակի այլևայլ ժանրեր***»[1],– գրում է Մայիս Ավդալբեգյանը (ընդգծումը բնագրում–Ա.Ն.): Սա պատմագրության ժանրի ամենակարևոր, հատկական և անփոփոխ առանձնահատկություններից է: Ընդ որում՝ միջնադարյան արձակի տարբեր ժանրերը պատմագրության համակարգում ներկայանում են ոչ միայն առանձին օրինաչափություններով ու ներժանրային մասնավորություններով, այլև շատ հաճախ՝ ամբողջական ու ավարտուն նկա-

---

[1] ***Մայիս Ավդալբեգյան,*** Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 25: